

Ամբաս Բիւրաս  
 Եմբագրութիւն «Փիիկնիկ», ի  
 Աղեփսանդրիա



S. Burat  
 Rédaction «PUNIG»  
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Նր. 45  
 ՏԱՐԵԿԱՆ... 45  
 ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

Նր. 15  
 ՏԱՐԵԿԱՆ... 15  
 ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

# Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Բ Ա Ճ Ն Ե Գ Ի Ն Ը  
 Կ Ա Ն Ն Ի Կ Է  
 Զեռագիր ԵՏՁ՝ դար-  
 ձուիր

Կ Ո Վ Կ Ա Ս  
 Տ Ա Ր Ե Կ Ա Ն Բ ա լ . 6  
 Ա զ դ եր կ ՚ ը ն գ ու ճ -  
 ու ի ն մ ս ս ն աւ ու ռ  
 պ ա յ մ ս ն ն եր ո վ .

Կը ծախուի ՄԷԿ դրուե ողջի

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902

ԹԻԻ 17

## ԻՆՉՊԻՍ ՈՐ Է

Օրուան հերոսը. Քահանայաց-  
 ման բուն ծագումը. Հոկտ. 18ի գայ-  
 րակողութիւնը. Անթաղ Դիակիկն մասք-  
 Դաւերուն զոհերը. Վերջին քաղումը  
 Աղբիւր չարեացը. Ժողովուրդը չը  
 իսարուի՛ . . . :

Տիրացու Միհրան Ղազարոսեան,  
 ահա՛ օրուան հերոսը, որ տեղիս Ս.  
 Պօղոս Պետրոս Եկեղեցիին Լուսարա-  
 րապետն է ու Դպրապետը, 16 տարի-  
 ներէ ի վեր: Այս մարդը, բնիկ Կ. Պոլ-  
 սեցի, ժամանակին հոս հաստատուած  
 է իբրև ձայնաւոր վարժապետ. այս  
 մարդուն կեանքովն ու անցեալովը մեր  
 մէջէն շատերը չ'են շահագրգռուած ու  
 թերևս պիտի չը շահագրգռուէին, եթէ  
 անի պահէր իր նոյն պաշտօնը, կամ  
 այսպէս ըսելով, եթէ զինք դպրապե-  
 տութենէ քահանայութեան բարձրա-  
 ցնելու դաղափար մը յղացուած կամ  
 առաջարկ մը ներկայուած չ'ըլլար.  
 ո՛չ ոք ժողովուրդի մէջէն, պիտի

չբաղէր տիրացուով մը, որուն պաշ-  
 տօնը կը կայանար սոսկ երգասացու-  
 թեան կամ դպրութեան մէջ: Արդ,  
 շատ բնական է թէ՛ ամեն հայ ան-  
 հատ, որ կը սիրէ իր եկեղեցին, որ  
 նախանձախնդիր է իր կրօնքին ու դա-  
 ւանութեանց պահպանմանը, չը կրնար  
 անտարբեր մնալ անոր քահանայաց-  
 ման անեկարգութիւնը ու գոհ կրօնա-  
 յին խնդրին: Ու այնպէս ալ եղաւ. ու  
 այսօր, քահանայացու անձը դարձած  
 է օրուան հերոսը:

Ինչպէս որ կը հաստատուի, Ս.  
 Պօղոս Պետրոսի դպրապետը քահանայ  
 ձեռնադրելու դաղափարը բխած է  
 մեր Ս. յվազեան Սրբազանին ըղբղէն,  
 Գահիրէի Ողբացեալ Տ. Եղնիկ Պալունի  
 քահանային վախճանման վաղորդայնը:  
 Ինք Ս. յվազեան Սրբազան, կը կանչէ  
 իր քովը Դպրապետը, կ'առաջարկէ  
 քահանայութիւնը. սա կ'առաջարկէ իր  
 անբաւականութիւնը. սակայն Սրբա-  
 զանը կը պնդէ, կը յամառի ու պետք  
 է ըսել, անոր, Դպրապետին միտքը կը  
 բանայ, կնքահայր մը և ձեռնադրու-  
 թիւնն անմիջապէս կատարելու հա-

մար բոլոր հարկաւոր զիւրութիւն- ները գտնելու համար: Ու Գարապետը գործի կը սկսի: Խնդիրը կը հաղորդուի Վսեմ. Ս.բրահամ Պէյ Բարթոպի, որ Այվազեան Սրբազանին խորհուրդ կը հարցնէ այս մասին:

Սրբազանը կ'ըսէ. 20-30 ստորագրութեանը հանրագրութիւն մը թո՛ղ մասնացուի ինձի Տիրուցութեան ֆանանայացուին ինկորոյ, ու ես եպիսկոպոսական իշխանութեանը կը ձեռնադրեմ: Ասոր վրայ 130 ստորագրութեամբ հանրագրութիւն մը կը յանձնուի Սրբազանին, Գարապետին քահանայացու մը խնդրով: Ամեն քան եղաւ լմնցաւ կ'ըսէ ինքնիրեն մեր Սրբազանը, ու կը փութայ Հոկտ. 18 ի Շարաթ առտուն ձեռնարկել նախնական այն է սարկաւազութեան կ. չման արարողութեանը:

Այդ օրուան Ս. Պատարագին ներկայ եղող հեղինակաւոր անձեր կը հաւատեն թէ՛ Այվազեան Սրբազան, «Աշակերտի» և զոյվե՞աներուն մէջէն զանոց կ'առնէ յիշատակութիւնը կարգ մը կարեւոր անուններու: մէկ օրինակով շատանա՛նք. «Նոյնի» օրէն և ևերձուածողն եւ զպիղծ տուար նորին» հատուածը բնաւ չարտատաներ: մոռացու՛մ է ըսենք: Հայաստանեայց եկեղեցին նորոված է այդ անձն ու իր տոհմը, որովհետեւ Բաղկեդոնի ժողովին՝ «Քրիստոսի մէջ երկու գաս բնութիւն կայ» դաւանեցաւ. այսինքն, Քրիստոս մարդ էր, երբ կուտէր կը խմէր, ևն. Աստուած էր, երբ հրաշք կը գործէր. մինչդեռ մեր եկեղեցին կ'ընդունի զՔրիստոս մարդ կասարեալ՝ անբաժանելի սասնածութեանը: Ահա՛ մեր Սրբազանին կրօնագրութիւնն ու աստուածարանութիւնը: Բայց մեր նպատակէն բոլորովին դուրս է յուզել կրօնային հարցեր, այն հղօր պատճառով որ մեկը արդէն Այվազեան եպիսկոպոսը լաւ կը ճանչնանք:

Փոքրիկ իրողութիւն մը. անցած տարի այս եպիսկոպոսն այցելութիւն մը կուտայ Յիսուսեան հօր մը, որ երբ կեղծ զարմանքով մը կը հարցընէ մեր եպիսկոպոսին թէ ինչո՞ւ թողած է կաթողիկէ եկեղեցին, սա կը պատասխանէ. «Ես հոս եկած եմ իմ նախկին հօքսն աւելցնելու. վերջը վերջը ԴՈՒԲ պիտի քաղէք զիս: Ահա՛ և ասիկ հայ եպիսկոպոս մը, որ պիտի ձեռնադրէր հայ քահանայ մը:

Վերադառնալով բուն նիւթին, պատմե՛նք թէ ի՞նչպէս, նոյն Շարաթ օրը, երեկոյեան ժամերգութիւնն երբ աւարտեցաւ ու Սրբազան Այվազեան շրջապատուած եկեղեցական դասէն, կը պատրաստուէր շարունակելու նոյն օրուան առտուն արարողութիւնը, և ահա՛ Տիրար Միհրան Տամատեան, Սահմանադրականաց ախոյեաններէն մին, մտեցաւ Դասը, պատշաճ լեզուով մը, խնդրեց Այվազեանէն չըսկսել արարողութիւնը. առարկելով թէ՛ ներկայ ժողովուրդը պիտի աշաղակէր «Արժանի յին և թէ՛ Հայոց եկեղեցին հնաւանդ կանոնները թոյլ չ'են տար, այսպիսի պարագաներու մէջ, կատարել ձեռնադրութիւն մը, հակառակ ժողովրդին կամքին: Պէտք է յիշել թէ այդ հրապարակային բողոքէն զատ, օրեր առաջ, Ս. Առաջնորդին մատուցուած էր հակահանրապիր մը, դիմած էին նաև երկու պատգամաւորութիւններ, մատնանկ ընելով ընծայացու անձին sqhsnոթիւնն ու քահանայութեան անշարմարութիւնը: Ս. Առաջնորդը միտքը դրածը կ'ընէ, իր եպիսկոպոսական իշխանութեամբը. . . Լուութիւն մը յարգեց այդ կարճաճ խօսքերուն, խորունկ ու 10 վայրկեան տևող լուութիւն մը, զոր յետոյ, խղելով Սրբազանը, դարձաւ ժողովուրդին ու բարձրաճայն ըսաւ. քանի որ կ'արգիլէք զիս եպիսկոպոսական պաշտօնիս կիրառութեան մէջ, ես ալ չ'եմ ձեռնադրելու ու

բոլոր պատասխանատուութիւնը ձեռք վրայ կը ձգեն: Հոն, եկեղեցիին դրանը միջև, խաղաղասէր Եպիսկոպոսնիս փոխանակ լռիկ մնջիկ անցնիլ իր սենեակը քաշուելու, վեղարովն ու փիլենովը կեցած, դրդուիչ խօսքերով մտքերը խռովեց, կարգ մը գիւրազգած, բարեպաշտիկ սրտեր թունդ հանեց, բակը խռնուղ բազմութեանը մէջ կրակը ձգեց ու քաշուեցաւ:

Ժամէ մ'աւելի տեւեց այդ ալեկոծութիւնը բակին. շատ մ'անպատշաճ խօսքերու փոխանակութիւն, հրմշտըկում, իրարանցում, յետոյ, քանի մը անձեր, ընդդիմադիր բազմութիւնը ներկայացընող, ելան խորհրդարանը, խնդրելու Ս. Առաջնորդէն որ հատաւ: մնայ իր հրապարակային խոստման վրայ, յետաձգելու ձեռնադրութեան արարողութիւնը: Բակին ամբողջը կամաց կամաց կը ցրուէր, երբ շրջափակին Մեծ Դռնէն կառք մը ներս մտաւ. Վսեմ. Աբրահամ Պէյ Բարթեղէր, դէպքին վայրը կանչուած: Որչափ որ ստուգեցինք, նորին Վսեմութիւնը կը հարցընէ Ս. Առաջնորդին թէ՛ ինչո՞ւ յետաձգեց արարողութիւնը. թէ օրէնքին դէմ է այն, ևն, սա կը պատասխանէ. վախես յեսաձգեցի»:

Երկու նոյն հարցումին, երկու նոյն պատասխանը կը տրուի, ու նորին Վսեմութիւնը, բնականաբար Եպիսկոպոսին պէս կամ չափ ոչ հմուտ՝ եկեղեցական կանոններուն, ու անոր եպիսկոպոսական կարգին ու իշխանութեան բռնաբարման մը հանդէպ կարծելով ինքզինք, թալ. Խնամակալութեան պիտի հանգամանքովը, կ'առաջարկէ Եպիսկոպոսին շարունակել ձեռնադրութեան արարողութիւնը, չըվախնալով քանի մը խռովարարներու — ինչպէս որ ցոյց տուած էր Սրբազանը — սպառնալիքներէն:

Ու Եպիսկոպոսը վար իջաւ, մտաւ տաճարը, սկսաւ արարողութիւնը:

Ս, մեն մարդ գիտէ նոյն գիշերուան Գայթակղութեան մանրամասնութիւնները, ոտիկաններու բերուիլը, քաղքիս կառավարիչ Վսեմ. Մահմուտ Սողի բաշային գալը դէպքին վայրը, տաճարին մէջ ծագած անսպասելի խուճապը, ձեռնադրութեան արգիլուիլը, ձեռնադրող ալեղարգին փախչել թագչիլը տաճարին զանգակատան մէջ, Տեարց Գրեգորեան եղբարց ու Ս. Մամիկոնեանին ձերբակալումը ու մէկ խօսքով, այդ գիշերուան բոլոր խաղքութիւնը...:

Նոյն գիշերը ձերբակալուած Գրեգորեանք ու Մամիկոնեանը խնամակալ Տեարց Մ. Գալֆայեանի ու Գ. Մելքոնեանի երաշխաւորութեամբ ազատ թողուած էին, հարցաքննութենէ ետք: Կիրակի առտուն եկեղեցին կը վաղնայն օրուան հաւատացեալները, պատարագին «յը յիշուի» աղաղակով մը պաշտօնանկ հռչակելու Ս. Առաջնորդը որ, բարեբաղդաբար իրեն համար, տաճարը չէր իջած: Պատարագը սակայն անցաւ անվրդով, մինչդեռ Խնամակալութիւնը բացառիկ նիստով մը կ'որոշէր երեք օր միջոց տալ քահանայացուին դէմ բողոքողներուն: Պ. Աստուր Առաջնորդարանին սպասաւորը բերաւ եկեղեցիին դրսի պատը փակցուց այդ որոշումը պարունակող Ազգը:

Ու ամբողջ մեկնեցաւ: Յաջորդօրը, երկուշաբթի առտուն Ազգ մը կը շրջաբերուի, Ընդհ. Միթիկին Ազգը: Նոյն օրը կառավարութեան կողմէն կը կանչուին հարցաքննութեան Տեարք Տամատեան, Թուրշուճեան և ուրիշ քանի մ'ազգայիններ: Նոյն իրիկունը ժամը Յին Բիրամիտի թատրոնին մէջ կը գումարուի Ընդհ. Միթիկը, որուն մէջ կը բանախօսէ Տիար Միհրան Տամատեան, բաւական սրտաշարժ եղանակով մը ներկաներուն աւետելով երկու հակոտնեաներու եղբայրակցու-

Թիւնը, կրօնային սրբազան դատի մը շուրջը:

Օ՞, յուզիչ տեսարանը, հոն էր Իփէքեան Շնորհքեանին քովիկը. հոն՝ Թուրչուճեան Զայլաքեան կրկին հարազատաց միջև. Աստուած իմ, այս ի՞նչ սրտախառն զուգակցութիւն. Տամատեանին գիրկերուն մէջ ի զուր կը փընտըռէին. . . Անթաղ Դիակը:

Դիակը բացակայ էր, տխուր ուրուականը միայն կը շրջմուէր Թատրոնին լայնքն ու երկայնքը, Թուլցած ականջները տնկած ու բորբոսքերանը խաշոր մը բացած, կըսպասէր հոն Միթինկին ելքին:

Զարմանալի՛ բան. մինչդէ՛ռ Յարգելի բանախօսը կ'ողջունէր գրկախառն համերաշխութիւնն երկու տարասեռ կուսակցութեանց, Կամայականութեան ստրուկներունն ու Սահմանադրութեան պաշտպաններունը, մենք միայն 300 ի կըցանք հասցնել Թիւր ներկաներուն այն Թատրոնին մէջ, ուր 600 է աւելի ազգայիններ տեսանք համախմբուած Սահմանադրութեան Միթինկին գիշերը Մայիսի 23ին, նաև, Պրիւսէլի Հայասիրաց Դօնկրէին առթիւ գումարուած Մեծ Միթինկին գիշերը, Յունիսի 23ին:

Պատճա՞ռը: Հասկցողը՝ միայն կը հասկընայ, իսկ այսօր, ա՛լ դաղտնիք մը չէ՛ անոնց համար, որոնք ինկած պաշտօնաւորներին 314 Թիւր կարգացին:

Զուարճալի՛ վառ խանդ մը մեր այս Ընդհ. Միթինկը, որուն մէջ գոնէ տեսականօրէն, երկու կնճռատ հարցեր լուծուեցան.

1. Առաջնորդին պաշտօնանկումը, ծովուն կամ Գահիրէի ճամբովը. 2. Զեռնադրութեան արգելումը:

Լոյսին մէջ այս ամենը:

Բայց մո՞լթը:

Օ՞, Տանդէ՛ մ'ըլլալ պէտք էր նկարել կրնալու համար այդ բոլոր անցած դարձածը գաղտնապահ կա-

մարներուն տակը մութին:

Դիտեցէ՛ք մութին մէջ խլրտող կէտը, լաւ նայեցէ՛ք ու պիտի կրնաք, պարզ աչքով որոշել հոն Անթաղ Դիակին մա՛տը, որ կը լարէ, որ կը նիւթէ, որ կը խառնէ, որ կը փորձէ փըլցընելու սրբազան շէնք մը, ժողովրդականութիւնը ժողովուրդի Մարդուն. վարկաբեկ ընել կը յաւակնի Վսեմ. Աբրահամ Պէյ Բարթողը, որ իր աթոռը բազմած օրէն իսկ ձեռնարկած է մաքրագործումի. . . :

Ոճի՛րը յղանալ ազգային գործունէութենէ պաղծեցնելու Մարդ մը, որ կացութեան մարզն է, և որ Ազգ. Եկեղեցիին ու Դպրոցին վրայ կը խենթենայ. մարդ մը, որ սիրտն ու քսակը բացած է իր ցեղին բարիքին ու օգտին. կոշտ ու կոպիտ, վրան բաց դաւերով, անանուն, անստորագիր, աշտեղի նամակներով յանդգնել վըշտացընելու, զ՛յրացընելու, վիրաւուրու սիրտ մը, ո՛չ հանրութեան իրական չահերուն ու մանկտիլին դաստիարակութեան վրայ կը գուրգուրայ. լրբութիւնը հագնիլ պատմուճանի պէս, սուտը, զրպարտանքն ու կեղծիքն ընտրել միակ ներկ, սեցընելու համար ճերմակ հոգիներ: Դեռ աւելին կայ.

Ազգին հազիւ մաքրուած կրթատունը նորէն լեցնելու համար իր տեսակէ մակաբոյծներով, ա՛լ չ'ըլլալիք ցածութիւնը ցածնալ հաշելու նոր հոգաբարձութեան դէմ. հրապարակին ժանտախտն ու հնտախտը հռչակուած այդ Անթաղ Դիակը մատնանշող հանրային գործիչներու հրապարակագիրներու դէմ որ ամբողջ կեանք մը տրամադրած են ժողովուրդին օգտին ու զարգացմանը —, շնական սուտերով ու անպատկառ իմաստակութիւններով հանրային կարծիքը գրգռելու ծաղրելի ճիգերու մէջ թաւալտկիլ. ահա՛ Մատը, որ ստեղծեց վերև մեր այդ Թուած բոլոր հրէշային հրաշակերտ-

ները, որոնք մէկիկ մէկիկ փլան, ու  
իրենց փլատակներուն տակ թաղեցին  
փողոցը նետուած թողուած ու հոտը  
մթնալորորը բռնած Անթաղ Դիակը:

Հերիք չըլեցար, թափառական  
հրէայ, ողջերու երկրին երեսը. հանգ-  
չէ՛ հիմայ, բորբոս բարոյականիդ ու  
մըլտո մտաւորականիդ փոփն մէջը:  
Խորմենկ, շատ խորունկ թաղեցին  
քեղ, անխոռով պառկէ՛, աներազ քու-  
նով մը:

Դուն ա՛լ պիտի չարքննաս, խուլ  
պիտի ըլլաս, պիտի չը լսեն այդ ֆու  
ականջներդ վայնասունը լալիաննե-  
րուդ, որոնք պիտի կրկնասունարիդ ու  
ինկիկիզձեիդ գովքը կտրուան, ժամե-  
րէն մէկուն մէջը կէս գիշերուան ու-  
րոնց ֆու հոգիիդ բոլոր ձգումովը պըլ-  
լուած էիր սեւ մէջքերուն:

Է՛հ, ա՛լ քաղութեաց՛ր, վերջին  
թաղումը թաղութեաց, ո՛վ Անթաղ  
Դիակ:

Հանգի՛ս ոսկորներուդ, այդ փը-  
սախացած ոսկորներուդ. . . .

Ա՛լ այսուհետեւ պիտի չը գործուին  
դուերը մուրիկն, այդ խայտառակուած  
ու վիժած դուերը, որսնք մէ՛կ, մէ՛կ  
անխոսովանելի նայասակ ունէին. հե-  
նացրնել ազգին տունէն Բարթող Պէյի  
պէս անձնուէր, գործունեայ ու ազդե-  
ցիկ անձնաւորութիւն մը, որուն օրով  
սեղիս հասարակութիւնը կը յուսայ  
սեսնել գեղեցիկ օրջան մը վերանորո-  
գումի:

Կրնայ պասաիլ որ կնամակալ-  
ներէն Տ. Գիմգոր Մելեմեանն ու իր  
յարգելի համախոհները — դիտելով  
արդէն իրենց ժողովրդականութեան  
նուազական յառաջանութեամբ առ-  
նել ֆալելը — հրաժարին կամ հրաժա-  
րած ըլլան պաշտօնէն, որ իրենցը չէր  
արդէն, կամ ատելի նիւզը, որուն մար-  
դը չէին իրենք, ֆանի որ — Մելեմե-  
անին ի՞նչ ալ աղուր կը յարմարի —

բաւային բէտրուն կամ շալին շնոր-  
հիրը կանչուած են հռն:

Արդէն չեն ալ կրնար մնալ. վա-  
ղը Բարթող Պէյ պիտի հաւելի պահան-  
ջէ, մօտիկ, շա՛ս մօտիկ անցեալի մը  
հաւելը:

Ազգին եկեղեցապատկան ընտիր  
ընտիր հողերը ժախտեցան. ո՛ր ազգ-  
ընդի. ժողովին հաւանութեամբը, ո՛ր  
օրինաւոր Թաղական Խորհուրդին որո-  
շումովը, ո՛ր Պատրիարքին վաւերացու-  
մովը:

Ծախտեցան. որի՞ ձեռքով, ի՞նչ  
գնով ու հիմայ ի՞նչ կ'արժեն:

Անցնինք միւսին:


Այդ աննոռնի կանը կամ Կեդր-  
Քաներ — ինչպէս մկրտեց «Ազատ Խոս-  
ք» — որուն մէջ ո՛չ լոյսը կը մտնէ  
ո՛չ ալ օգը կը խաղայ, այդ անշարժ  
խանը, վաղը Բարթող Պէյը պիտի ցցէ  
մէջսեղ այդ խնդիրը — ֆանի առ հա-  
րիր պիտի կրնայ հասոյթ բերել իր  
այդ նգնաւորի կամ թիապարսի խցիկ-  
ներով ուր մէկ հոգիկնոց մանակալ մը  
միայն դնելէ ետքը սեղ չը մնար նըս-  
տելու:

Քանի՛ ֆանի ձեռնհաս ու վսա-  
նելի հարսարապետներու դիմում, խորհուրդ  
հարցում է թէ՛ իրաւ այդ  
շէնքը կարժէ՞ այդքան ոսկի. բերնէ  
բերան պարտող գրոյցները բնութիւնը  
չ'ունին գոհացրնելու ժողովուրդը որ  
զգուանով կը նայի այդ դասապար-  
տուած շէնքին պաղ պատերուն:


Հետեաքար, եթէ ժողովուրդը կը  
փափագի որ իր նուիրական շահերը  
պաշտպանուին, սահմանադրական օ-  
րէնքը սիրապետէ հոս, նու՛ ու օրինա-  
ւոր Թաղական Խորհուրդի մ'ընտրութիւ-  
նը փութացուի. եթէ ժողովուրդը կ'ուզէ  
որ ծախուած կալուածներուն ու ան-  
նոռնի շէնքին, ինչպէս նաեւ ուրիշ  
զաղտնի յայտնի հաւելները հրապարակ  
հանուին, եթէ կուզէ որ իր զաւակ-  
ները դաստիարակուին եւ կրթուին իւր-

նամով, թո՛ղ չը խաբուի դաւերէն ու մեհենայութիւններէն կարգ մը մարդերու, որոնք բան գործ ըրած են իրենց դիրք մը շինել քանդիչ ու անպատիւ միջոցներով:

ժողովուրդը թող չը խաբուի արտաքին երեսօյրներէ, թագուն դիտումով մը սարձուած ազգին ու եկեղեցիին ոչ — պատուաբեր ու փորձիչ ցոյցերէ կամ յախուռն, կրֆոս ու անտեղի յարձակումներէ, որոնք փնայցնելու միայն կը ծառայեն աղգային կենսունակութեան ու յառաջդիմութեան տարերք:



### ԴԱՒ ՄԸ



Առաջին օրէն յայտնի երեցաւ որ տիրացու Միհրան Ղազարոսեանի քահանայացման խնդիրը դաւ մըն էր պարզապէս, մութին մէջ սարքուած, Վսեմ. Աբրահամ Պէյ Բարթողի գէմ, Լեւոն Մկրտիչեանի «պաշտօնաթերթ»ին վերջին թիւը եկաւ փարատել այդ մասին եղած տարտամ կասկածներն ալ: Բարեբաղդաբար այդ դաւը այնքան կոշտ կերպով յղացուած էր ու այնքան շուտ մէջտեղ ելաւ որ վնասաբեր չկրցաւ ըլլալ: Ընդհակառակը անգամ մըն ալ խայտառակեց զայն դաւադրող իսառնակիչները:

Եւ ինչո՞ւ Վսեմ. Բարթող Պէյը վարկաբեկ ընելու այդ անզօր ջանքերը:

Որովհետեւ Բարթող Պէյ իր պաշտօնավարութեան սկիզբէն ի վեր օգտակար ու անձնուէր գործունէութիւն մը ցոյց կուտայ և օր աւուր սիրելի կը դառնայ ժողովրդին, որուն ընտրելին եղած էր արդէն Մարտի քուէարկութեան ատեն և յայտնի կ'երևայ որ նոր ընտրութեան ժամանակ քուէներու ջախջախիչ մեծամասնութեամբ մը

պիտի վերադառնայ իր աթոռը:

Այս հեռանկարը բնաւ հաճելի չէր նախկին ապիկար ու անկեալ խնամակալութեան որ միշտ վերստին պաշտօնի անցնելու մարմալը ունի:

Ասկէ զատ մեծ, դամոկլէսեան սուր մը կայ կախուած նախկին ապիկար խնամակալներու գլխին. այն է Վսեմ. Բարթող պէյի դիտաւորութիւնը մանրակրկիտ քննութիւն մը բանալու «եկեղեցիի կալուած» կոչուած խաղըութեան մասին և արդիւնքը հաղորդելու ժողովրդին: Յայտնի է որ այդ տեսակ քննութեան մը արդիւնքը ի՞նչ լախտի հարուած մը պիտի ըլլայ այդ ինքնահաւան ու ապիկար մարդոց գլխին ու ի՞նչ մեծ ապացոյց մը իրենց խենթ ու խելառ գործունէութեան: Այն ատեն ժողովուրդը պիտի տեսնայ թէ Մեղքոնեանի ու իրենպէսներու նման պօշ մարդիկ որքան սուղի կը նստին ազգին գլխուն և ի՞նչ անդարմանելի փորձանքներ յառաջ կը բերեն:

Արդ, ամէն նենդ ու աղտոտ միջոցներով հարկ էր առաջը առնել այս ամենուն և ասոր միակ միջոցն էր որ և է պատրուակով մը ժողովրդեան խոտելի ընել Բարթող պէյը. ու կը սպասէին... Լեւոն Մկրտիչեանի գալուն:

Ի՞նչ կար մէջտեղը մատերնին փաթթելու համար. տիրացու Միհրանին քահանայացման խնդիրը:

Ու կառչեցան անոր:

Գրիգոր Մեղքոնեան համարը առնելով իր խրատատուէն, գնաց Առաջնորդին և դիտել տուաւ թէ՛ «ինքը քահանայութեան սուրբ կոչումին պէտք եղածին չափ արժանաւոր չէր տեսնոր տիրացու Միհրանը»:

— Էֆէնտիմ, ֆրանքաբազմ, ինկիլիզէ խօնուչամազ, կրկնատոմար պիլ-

մէզ, նասը՛ խահանայ օլուր. փրօ-  
թէսթօ իտէրիմ. . . ևն:

Միւս կողմէ իր մէկ քանր ար-  
բանեակները՝ հանրագրութիւն մը սկը-  
սան շրջեցնել իր գրասենեակներուն  
մէջ, տիրացու Միհրանը քահանայացման  
անարժան հռչակող, որ «պարտաւորիչ»  
բայց ո՛չ «ստիպողական» գրութեամբ  
ստորագրուեցաւ: Ժողովրդէն քանի  
մը միամիտներ ալ ինկան թակարդը  
ու ահա՛ Շարաթ իրիկուան գայթակ-  
ղութիւնը եկեղեցիին մէջ:

Առաջնորդը էր անխելք վար-  
մունքովը, Բարթոլ Պէյ իր հապճեպ  
որոշումովը, խնդիրը այնքան մեծ-  
ցուցին ու խառնակեցին որ պահ մը  
կարծուեցաւ թէ դաւը յաջողած էր:

Բարեբաղդաբար ողջմտութիւնը  
շուտով տիրեց մտքերուն և տիրացու-  
ական խնդրին մէջ անկեղծօրէն մըտ-  
նողները զգացին որ Մելքոնեան ֆի-  
ֆի ձեռքին տակ կոյր ու ապուշ գոր-  
ծիք մը ըլլալու վրայ են:

Գայթակղութիւնը սարքողները ան-  
շուշտ պիտի շարունակեն տակաւին ի-  
րենց շիւ մեքենայութիւնները, բայց  
ա՛լ ուշ է կարծենք:

Օգո՛ւտը այս ամէնուն: — Մեր  
անկարող առաջնորդին հրաժարեցումը  
խնդրող հանրագրութեան մը զրկուիլը  
պատրիարքարան, որու մասին գրեթէ  
ամենքս ալ համամիտ ենք:

Աւրեմն իրա՛ւ է որ երբեմն չա-  
րիքէն բարիք կը ծնի:

Իսկ տիրացու Միհրանը: Շիտակը  
զիս շատ չզբաղցնե՛ր: Եթէ անարժան  
է ու քահանայ պիտի ըլլայ, ովկիա-  
նոսին մէջ կաթիլ մը ջուր աւելի ըսել  
է, ինչ որ ողջումի վախ չի տար: Իսկ  
եթէ արժանի է, աւելի լաւ. Գրիգոր  
Մելքոնեան, առանց խղճահարութեան  
կրնայ իր ննջեցեալներու հոգւոյն պա-

(\*) Ծիշդ է որ արբանեակներէն ց-  
մանք ստորագրած են, առանց սակայն յղա-  
ցողներն ըլլալու:

տարագ ընել տալ իրեն, այն պայմա-  
նաւ սակայն որ ծախքը «պարտաւո-  
րիչ, բայց ո՛չ ստիպողական» կերպով  
իր պաշտօնեաներէն չառնէ:

Գալով Մելքոնեան կոչուած պա-  
րապ մարդուկին, կրնայ վտան ըլլալ  
որ, հակառակ իր անբաժան խրատա-  
տուին շիւ մեքենայութիւններուն, եր-  
բէք ժողովրդին ձայնովը մտնելիք  
չունի այն առաջնորդարանը ուրի՛ց  
Մարտի քուէարկութեան ատեն խայ-  
տառակաբար վաճառուեցաւ:

Խրատ կուտանք իրեն իր ճամբու  
մտուիլը պատրաստելու:

«Կէյճի Պորթն քապարք սխր էշե-  
յի նիյճէյե», կ'ըսէ Կեսարիական ա-  
ռածը: ԵՐՈՒԱՆ? ՕՏԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ  
ԼՕՁԱՆ, ՁՈՒԻՑԵՐԻԱ

Կրթատունս կ'ընդունի 10 և 20  
տարեկան աշակերտներ, որոնց գիտա-  
կան, գրական, արհեստագիտական, ևն,  
առողջ ու կատարեալ կրթութիւն մը  
կուտայ, ծնողքներու բաղձանքին հա-  
մեմատ: Եւրոպական և ասիական լե-  
զուններու, գիտութեանց և վաճառա-  
կանական ուսմանց մէջ գործնականն իր  
կարևոր տեղը կը բռնէ տեսականին  
քով: Չանազան ազգէ դասատուներու  
և աշակերտաց ներկայութիւնը լեզու-  
ներու ուսումը բարձրօրով կը դիւրացնէ:  
Իսկ կարևոր քաղաքներու և գործա-  
րաններու այցելը գիտական ուսուց-  
ման մեծապէս կը նպաստեն:

Կրթատունս մեծ խնամք կը տանի  
նաև բարոյական և ֆիզիքական կրթու-  
թեանց:

Հայ ծնողներու համար մասնա-  
ւոր պայմաններ:

Մանրամասնութիւններու և պայ-  
մաններու համար դիմել առ

I, Longeraie, Lausanne  
Suisse

Տնօրէն

Մ. Նալպանտեան

Տոքո. Ի Գիտութիւնս

Մասնաւոր-Ուսուցիչ Հա-  
մալտարանի

**ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ**

Ամերիկեան վիսյեայ բժիշկ  
Սեօսրիս փողոց թիւ 1  
«Մար ս'Ալեխանճրի»ի սպարանիև  
վրայ յ.Ա. յարկը

Տողթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան  
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-  
դոյ հասարակութեան թէ՛ ինք հաս-  
տատուած է վերջնապէս քաղաքիս մէջ  
ու պատրաստ է դարձանելու ընդհա-  
նուր հիւանդութիւններ: Մասնագի-  
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-  
ծուած ու նորագոյն բժշկական փոր-  
ձերով ու սխաղէմով կը բուժէ Բանա-  
ւանդ արեան վերաբերեալ զանազան  
ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ա՛մն օր  
կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ Չո-  
րեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան  
ժամը 9-11: ձրիաբար կը դարձանէ ի-  
րեն դիմող ազքատ հիւանդները:

**«ԱՐԱՔՍ»**

Հայկական տպարանը թէ՛  
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և  
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն  
տեսակ տպագրական գործեր  
կը կատարէ մեծ խնամով եւ,  
ինչ որ նուազ կարեւոր չէ:  
**ԽԻՍՏ ԶԱՓԱՆՈՐ ԳԻՆԵՐՈՎ,**



Երիտասարդ մը, որ քաջ Անգլիագէտ  
է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անդ-  
լերէնի, տուներու մէջ ալ, իրտա զահացու-  
ցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբա-  
գրութեան:

**SALAMANDER**

**ՍԱԼԱՄԱՆՏԵՐ**

Ապահովագրական Ընկերութիւն  
ընդդէմ հրդեհի.

**ԱՄՍԹԵՐՏԱՄ**

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս  
նաև Մովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմել նաև Ընդհանուր Գործակալ եւ Լիսագոր-Փոխանորդ

**ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆՍ**

Աղեխանդրիս, պզտիկ Մեկնիէ Ապուսարսա փողոց թիւ 10

Տպագր. Հոյկ. Տպ. «ԱՐԱՔՍ»ի Աղեխանդրիս

Le Gérant, J. Munier

**L'ALLIANCE**

**Լ'ԱԼԻԱՆՍ**

Մովային Ապահովագրական Ըն-  
կերութիւն.

**ԴԵՐԼԻՆ**

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ